



ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

1. Հազարամյակներ շարունակ Հայկական լեռնաշխարհում բնակվել են հայկական մոֆրոնը, բեզոարյան այծը և ընձայռուծը: Այս երեք տեսակների միջև ձևավորվել է յուրօրինակ փոխադարձ կապ: Ընձայռուծը, սնվելով կենդանիների այդ տեսակներով, կապարելագործել է նրանց՝ դարձնելով ավելի արագավազ և դիմացկուն: Իր հերթին կապարելագործվել է նաև ընձայռուծը, քանի որ միայն ուժեղ և ճարպիկ կենդանուն կհաջողվի որսալ այդ տեսակներին: Բնականոն այս գործընթացին միջամտել է մարդը՝ անխնա որսալով բոլոր երեքին էլ: Արդյունքում՝ երեք տեսակներն էլ կանգնած են վերացման վտանգի առաջ:

2. Տասնամյակներ առաջ Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով լիճի ծանծաղ մասերում արագորեն սկսեցին զարգանալ ջրիմուռները: Այս երևույթը կանխելու նպատակով լիճ ներմուծվեց Սիգ ձուկը, որը սնվում է այդ ջրիմուռներով: Ընտելանալով լճի կենսապայմաններին արագ սկսեց բազմանալ և վրանգել լճի էկոլոգիկ ձկնաբնակների գոյությանը: Այսօր Սևանում բնակվող ձկնաբնակների մեջ գերակշռողը Սիգ ձուկն է: Այս երևույթը ցույց է տալիս, որ բնության «գործերին» միջամտելիս անհրաժեշտ է հաշվի առնել ձևավորված հավասարակշռությունը:

3. ԱՄՆ-ի Էրի լճի շրջակայքը հանգստի գոտի էր, բայց մոծակների առափությունը հնարավորություն էր տալիս հարմարավետ հանգստի կազմակերպման համար: Պարզապես մոծակների առափությունն էր: Մոծակների դեմ պայքարում օգտագործվեց ԴԴՏ թունաքիմիկատը: Մի քանի տարվա ընթացքում մոծակները վերացան, բայց դրանց հետ աստիճանաբար անկերացան նաև ջրլող թռչունները: Լճի ջուրը սկսեց նեխել և անդուր հոտ արձակել: Հանգստի գոտին դարձրեց գործելուց:

Բնչ էր կապարվել: Պարզվում է՝ մոծակների թրթուրները սնվելով հարակի բուսական մնացորդներով կանխում են դրանց նեխումը, միաժամանակ թրթուրներով սնվում են լճում բնակվող ձկները, որոնցով էլ կերակրվում են թռչունները: Բնության այս ոչ օգտակար միջավայր լճի ամբողջ էկոհամակարգի դինամիկ հավասարակշռության փաստացի բաղադրիչն է: